

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՋՈՐԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

01.01.2011թ. – 31.12.2011թ.
Ժամանակաշրջանի համար

Համայնքի ղեկավար՝ Լ. Խ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետու ժամանակաշրջանում առավել ուշադրություն են դարձրել համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների, բյուջեի սեփական եկամուտների մուտքերի ապահովման, բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներին:

Համայնքի բյուջեն կազմելիս, այն դիտելով որպես համայնքի զարգացման հիմք՝ լուրջ ուշադրություն են դարձրել եկամտային մուտքերի /գույքահարկի, հողի հարկի, հողի վարձավճարի, տեղական տուրքերի և վճարների/ հավաքագրման խնդիրների կատարման վրա: Ընդ որում ղեկավարվել են եկամտային մուտքերի եռամսյակային, կիսամյակային և տարեկան համամասնությունները պահպանելու սկզբունքով:

Որպես ղեկավար, լինելով բյուջեի տնօրինման և վերահսկման պատասխանատու, բյուջեի ծախսային մասը հաշվետու ժամանակաշրջանում նպատակաուղղել են հետևյալ խնդիրների լուծմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում ծախսային մասը կազմել է 90386.5 հազ. դրամ է, որից աշխատավարձ՝ 32801.0 հազ. դրամ, սոցվճարներ՝ 5567.5 հազ. դրամ, 62884.0 հազ. դրամ կազմում են կոմունալ, գրասենյակային, ծառայողական ավտոմեքենայի շահագործման, համայնքային ընդհանուր բնույթի ծառայությունների իրականացման ծախսերը, համայնքի պահուստային ֆոնդից 2450.0 հազ. դրամի օգնություն է տրվել համայնքի սակավ ապահովված շուրջ 30 ընտանիքների:

Նշված ծախսերի մեջ ներառված են մ/մանկապարտեզի (9458.8 հազ. դրամ) և մշակույթի կենտրոնի (6403.3 հազ. դրամ) ծախսերը:

Գաղտնիք չէ, որ համայնքի բյուջեի եկամտային մասի կատարման գործում կարևոր է այն հանգամանքը, որ համայնքի բնակիչների զգալի մասը գտնվելով արտագնա աշխատանքի մեջ, դրանով են հոգում իրենց ընտանիքների կարիքները, այդ թվում՝ նաև հարկային պարտավորությունների կատարումը: Վերջին տարիների դժվարությունների հետ կապված գյուղապետարանը կանխարգելիչ միջոցառումներ է ձեռնարկում մեղմացնելու տարբեր բացասական երևույթների ազդեցության հետևանք-ները բյուջեի ինչպես եկամտային մասի հավաքագրման, այնպես էլ ծախսային մասի իրականացման վրա: Եվ պատահական չէ, որ երրորդ տարին անընդմեջ սեփական եկամուտների հավաքագրումը հատել է 100%-ի սահմանը:

Լուրջ ուշադրություն են դարձրել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների բնագավառում կոմունալ խնդիրները կյանքի կոչելու գործին: Կատարվել են բնակավայրի բարեկարգման, գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհների մասնակի նորոգման, պահպանության և շահագործման աշխատանքներ: Այդ հարցում մեծ ներդրում են ունեցել բնակչությունը և բարերարները: 2011թ. ընթացքում տեղական բյուջեի միջոցների հաշվին ասֆալտապատվեց գյուղի կենտրոնական ճանապարհի շուրջ 700 մետր երկարությամբ հատվածը, որի արժեքը կազմեց 27503.0 հազ.դրամ, ավարտման փուլում են գյուղի պարզեցված հատակագծի աշխատանքները:

Որպես համայնքի ղեկավար մեծ ուշադրություն են դարձրել ՀՀ օրենքները համայնքում տարածելու և դրանք կյանքի կոչելու գործին:

Համայնքը ունի 1 հիմնական և 1 ավագ դպրոց, ուր հաճախում են 800 աշակերտներ: Դպրոցները ամբողջովին վերանորոգված են: Գյուղապետարանը աջակցում է սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ դասագրքեր ձեռքբերելու և այլ օգնություններ ցուցաբերելու հարցում:

Մ/մանկապարտեզը գործում է անվճար հիմունքներով, աշխատում է 3 խումբ, ուր հաճախում է 80-90 երեխա, հիմնականում սոցիալապես անապահով ընտանիքներից:

Հաշվետու տարում մանկապատեզի շենքը վերանորոգվեց և ապահովվեց գույքով:

Գյուղապետարանը ուշադրություն է դարձրել անասնաբուժական ծառայությանը, խստորեն պահանջելով կատարել հակահամաճարակային միջոցառումներ, նախապես կանխելով անասնազլխաքանակի մոտ հիվանդությունների առաջացումը: Ելնելով անասնազլխաքանակից համայնքը ունի երեք անասնաբույժ:

Համայնքի բյուջեի կատարման սպասարկումը իրականացվում է Մարտունու գանձապետական բաժանմունքի կողմից, առանձին բյուջետային հաշվի համարով: Համապատասխան ֆինանսների հատկացումը կատարվել է համայնքի բյուջեի հաշվին առկա և բյուջեում նախատեսված միջոցների հաշվին:

Աշխատանքի սոցիալական ծառայության բնագավառում որպես պետության կողմից պատվիրակված լիազորություն կատարվել են համայնքի ընտանիքների ուսումնասիրություններ, որոնց արդյունքում կազմակերպվել է սոցիալական ծառայութ-

յան գործունեությունը: Համայնքի սոցիալ-տնտեսապես անապահով և կարիքավոր 225 ընտանիքներ ընդգրկվել են «Փարոս» համակարգ: Թվով 12 միայնակների համար կատարվել է համապատասխան հաշվառում և նրանք նույնպես ընդգրկվել են նույն համակարգ: 30 ընտանիքներ ներգրավվել են նպաստ եռամսյակային ծրագրում:

Որպես պարտադիր լիազորություն հողօգտագործման բնագավառում իրականացրել են վերահսկման աշխատանքներ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման վերաբերյալ՝ հողօգտագործողներից պահանջելով պահպանել հողային օրենսդրության պահանջները:

Հասարակական կարգի պահպանությունը համայնքում բարձր հիմքերի վրա է դրված: Իրավախախտումները հազվադեպ են, շնորհիվ բնակչության, և հատկապես երիտասարդության շրջանում մշտապես տարվող դաստիարակչական և ռազմահայրենասիրական աշխատանքների:

Քաղաքաշինության բնագավառում սահմանված կարգով իրականացրել են քաղաքաշինական աշխատանքները: Համայնքի տարածքում կանխվել և կասեցվել են ինքնական շինարարությունները:

Աստիճանաբար լուծվում են համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրները: Մշտապես աշխատանքներ են կատարվում կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ: Դրանց արդյունքում գյուղի բոլոր թաղամասերն էլ ապահովված են էլեկտրականությամբ և հիմնական գազատարերով: Գյուղը ապահովված է ինչպես խմելու, այնպես էլ ոռոգման ջրով:

Համայնքի ղեկավարության անմիջական մասնակցությամբ համայնքում գործում է «Արեգակ» կազմակերպությունը, որը դրամական կարճաժամկետ և երկարաժամկետ վարկեր է տրամադրում համայնքի բնակչությանը հողագործական և անասնապահական աշխատանքներ կազմակերպելու նպատակով: Համայնքի մի քանի բնակիչներ 2011թ. ընթացքում օգտվեցին կառավարության կողմից ներկայացված գյուղատնտեսական վարկի ծրագրից:

Ցավոք պետք է նշեն, որ համայնքի բյուջեն հնարավորություն չի տալիս լուծելու հրատապ խնդիրներ.

1. Համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի և ջրամբարի վերանորոգումը,
2. Գյուղապետարանի շենքի վերանորոգումը,

Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել են համայնքի ավագանու 6 հերթական և արտահերթ նիստեր, որոնց ընթացքում քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կանոնակարգը, կազմավորվել են ժամանակավոր և մշտական հանձնաժողովներ, հաստատվել են համայնքի ղեկավարի և աշխատակազմի դրույքաչափերը:

Քննարկվել են համայնքի 2011թ. տարեկան բյուջեի կատարման արդյունքները՝ ընդունվել են համապատասխան որոշումներ: Քննարկվել և հաստատվել են տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, հաստատվել են համայնքային ենթակայության գույքի ցուցակները, սահմանվել՝ արտավայրի վարձավճարների դրույքաչափերը:

Որպես համայնքի ղեկավար կայացրել են որոշումներ բազմաթիվ կարևոր խնդիրների վերաբերյալ.

1. Հաստատել են համայնքի ՀԾ պաշտոնների անձնագրերը.
2. Կազմավորել են ՀԾ մրցութային և ատեստավորման հանձնաժողովները.
3. Կազմավորել են սահմանված կարգով հանձնաժողովներ ըստ բնագավառների.
4. Հաստատել են համայնքի ղեկավարի աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները.
5. Ընդունել են որոշումներ, որոնք բխում են համայնքի սոցիալ-տնտեսական շահերից:

Աշխատակազմի քարտուղարից մշտապես պահանջել են ժամանակին պատշաճ կերպով վարել գյուղապետարանի գրասենյակային գործունեությունը, ժամանակին ներկայացնել համապատասխան պետական մարմիններին պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, նախապատրաստել և կազմակերպել համայնքի անդամների ընդունելություններ:

2012թ. ընթացքում պատրաստվում ենք լուծելու շատ կարևոր խնդիրներ, որոնց իրագործելու նպատակով առաջին հերթին անհրաժեշտ է ավելի բարձրացնել համայնքի կառավարման արդյունավետությունը, ապահովելով կատարվելիք աշխատանքների հրապարակայնությունը և բյուջեի իրականացման թափանցիկությունը:

Առաջնահերթ խնդիր է համարվում բերքահավաքի ճիշտ կազմակերպումը, որը լուրջ նշանակություն ունի բնակչության կենսամակարդակի ապահովման գործում:

ՔԱՂՎԱԾՔ

ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 30.01.2012թ. ԿԱՅԱՑԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

30.01.2012թ.

գ. Ձորագյուղ

Ձորագյուղ համայնքի ընդհանուր ժողովը նախագահում էր ՀՀ
Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի
ղեկավար Ս. Խլղաթյանը:

Օրակարգում

Ձորագյուղ համայնքի ղեկավարի 2011թ. հաշվետվություն:

Ձեկ. համայնքի ղեկավար Լ. Գրիգորյան:

Լ. Գրիգորյանը ներկայացրեց 2011թ. Հաշվետու ժամանակաշրջանում
առանձին բնագավառներում կատարված աշխատանքների մասին:

Նշեց, որ համայնքի բյուջեն կազմելիս լուրջ ուշադրություն է
դարձվել եկամտային մուտքերի /գույքահարկի, հողի հարկի, հողի
վարձավճարի, տեղական տուրքերի և վճարների/ հավաքագրման
խնդիրների կատարման վրա:

Հաշվետու ժամանակաշրջանում բյուջեի ծախսային մասը կազմել է
90386,5.0 հազ.դրամ, որից փաստացի աշխատավարձ՝ 32801,0 հազ.
դրամ, սոցվճարներ՝ 5567,0 հազ. դրամ, 62884,0 հազ. դրամ կազմում
են կոմունալ, գրասենյակային, ծառայողական ավտոմեքենայի
շահագործման, համայնքային ընդհանուր բնույթի ծառայությունների
իրականացման ծախսերը, համայնքի պահուստային ֆոնդից 2450,0
հազ. դրամի օգնություն է տրվել համայնքի սակավ ապահովված
շուրջ 30 ընտանիքների: Նշված ծախսերի մեջ ներառվում են
մ/մանկապարտեզի /9458,8 հազ. դրամ/ և մշակույթի կենտրոնի
/6403,3,0 հազ. դրամ/ ծախսերը:

Համայնքի բնակիչների զգալի մասը գտնվելով արտագնա աշխա-
տանքի մեջ դրանով են հոգում իրենց ընտանիքի կարիքները, այդ
թվում նաև՝ հարկային պարտականությունները: Այնուամենայնիվ,
արդեն երրորդ տարին է ինչ սեփական եկամուտների հավաքա-
գրումը հատում է 100%-ի սահմանը:

